զի հրաման արար զի մի՛ երևեսցի գինի նոր յամենայն իշխանութիւնս իւր՝ սաստիկ հրամանաւ. եւ մարդ եղ յամենայն տեղիս՝ ի գիւղս եւ յաւանս եւ ի շէնս եւ յարտորայս եւ յայգիս[1]), եւ ուր գտանէին՝ ծեծէին, գանէին, տուգանս առնէին ի սահմանաց քաղաքիս մեծի առ կողմնօքն Նիկոմիդացոց և ծովեզերօքն Եալովոյ և Իւլթանացոց և առ կղզօքն ովկիանու, մինչ զի սաստկանայր անէծք և արտասուս ի վերայ պղծոյն, զի Կ օխա խաղողին ըստակ մի եղև, և վաթէին ի ծով և լնուին յերկիր։ Յետ ոչ բազում աւուրց սաստկանայր և ցաւ ի վերայ հօր նորին անդէն յէտրէնէ և տանիւր առ իւր զորդին ստէպ և առնէր յարքունիսն զայմախամ փոխանորդ իւր, որ եղև ի Սեպտեմբերի Ե։ Սա զպոռնիկս բազումս աքսորեալ հալածեաց ի Կիպրոս և զբազումս ծովահեղձ արար։

Եւ աստ նորանիստ զայմախամն առեալ դրամ ինչ, նոյնպէս եւ քեհապէկն Սուլէյման եւ մոռացան զնովաւ, ապա և տառապեալքն հոգևորեցան սակաւ ինչ յարդիւնս վաստակոց իւրեանց։

Լինէր մահ տարաժամ յոյժ ցասմամբ տղայոց եւ մանկանց ամենայն բամից աղանց։ Վասն որոյ Հայք և ամենայն եկեղեցիք պահօք պնդեցան ծոմով, զենմունս առնելով մատաղաց, պաշտամանց և պատարագաց՝ Վարդավառէս մինչ ի տօն Փոխման Աստուածածնին. եւ զի ոչ լինէր անձրեւ ի Պենտէկոստէ աւուրցն եւ յոյժ երաշտութիւն, եւ ի ԺԵ Օգոստոսի լինէր ֆոթունա մեծ հանդերձ չարժիւ, և Աստուածածնի տօնին ապա եկն անձրև։ Լուր լինէր՝ լինել մահն սաստիկ յամենայն աշխարհ և ի բանակն Տաճկաց։

1) ցայգիս.

414000 + 84.900